



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Մ Ա Ն

16 սեպտեմբերի 2021 թվականի N 1542 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒԼԻՍԻ 3-Ի N 712-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հուլիսի 3-ի «Զինված ուժերում, ազգային անվտանգության, ոստիկանության մարմիններում, քրեակատարողական և փրկարար ծառայություններում ծառայության առանձնահատկություններով պայմանավորված հավելումների տրամադրման դեպքերը, դրանց վճարման չափերը և կարգը սահմանելու մասին» N 712-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) որոշման 3-րդ կետի 4-րդ ենթակետում «և «Թ» բաժիններում» բառերը փոխարինել «,«Թ» բաժիններում և «Թ.1» բաժնի 16.2-րդ և 16.3-րդ կետերում» բառերով.

2) որոշման 3.1-ին կետը «հերթապահ ծառայությունների,» բառերից հետո լրացնել «Օպերատիվ կառավարման կենտրոնի,» բառերով.

3) որոշման N 8 հավելվածի «Ա» բաժնի 1-ին կետի 1-ին ենթակետը «, օպերլիազոր» բառից հետո լրացնել «, կրտսեր օպերլիազոր» բառերով.

4) որոշման N 8 հավելվածի «Գ» բաժնի 5-րդ կետի 4-րդ ենթակետում և «Ե» բաժնի 9-րդ կետի 3-րդ ենթակետում «ավագ ինժեներ, ինժեներ» բառերը փոխարինել «ավագ ճարտարագետ, ճարտարագետ» բառերով.

5) որոշման N 8 հավելվածի «Ե» բաժնի 11-րդ կետը «ծառայողներ» բառից հետո լրացնել «, Երևան քաղաքի վարչության ենթակա տարածքային բաժնի ծառայության վաշտի ծառայողներ, տարածքային բաժնի բաժանմունքի ծառայության ավագ տեսուչ» բառերով.

6) որոշման N 8 հավելվածի «Ը» բաժնի 15-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

| « 15. ՀՀ ոստիկանության պարեկային ծառայություն | | | | | | | | | | |
|---|--------|-------------------------|--|--------------------------|---------------------------|----------------------------|----------------------------|----------------------------|---------------------------------|---------|
| NN | խումբը | պաշտոնների անվանումները | ամսական հավելումների չափերն ըստ ծառայության տարիների (դրամ) | | | | | | | |
| | | | 1-ին մակարդակ (0-2 տարի) | 2-րդ մակարդակ (2-5 տարի) | 3-րդ մակարդակ (5-10 տարի) | 4-րդ մակարդակ (10-15 տարի) | 5-րդ մակարդակ (15-20 տարի) | 6-րդ մակարդակ (20-25 տարի) | 7-րդ մակարդակ (25 և ավելի տարի) | |
| Ը | 1) | 38 | Վարչության պետ | 176,334 | 181,034 | 186,016 | 191,003 | 196,235 | 216,769 | 217,277 |
| | 2) | 37 | Վարչության պետի տեղակալ | 165,126 | 169,593 | 175,889 | 180,712 | 185,534 | 210,597 | 212,955 |
| | 3) | 30 | Բաժնի պետ | 209,645 | 215,162 | 221,599 | 227,376 | 233,626 | 259,651 | 266,597 |
| | 4) | 28 | Բաժնի պետի տեղակալ | 207,859 | 213,121 | 219,448 | 225,163 | 231,895 | 259,966 | 267,790 |
| | 5) | 26 | Բաժնի կազմում բաժանմունքի պետ | 194,543 | 199,195 | 204,508 | 209,590 | 214,650 | 248,759 | 260,882 |
| | 6) | 25 | ՀԿՀ ավագ տեսուչ (պարեկային ծառայության կազմակերպման, մոնիթորինգի և վերլուծության բաժինների) | 190,464 | 195,116 | 199,768 | 204,850 | 209,910 | 214,963 | 220,426 |
| | 7) | 22 | Ավագ տեսուչ (պարեկային ծառայության կազմակերպման, մոնիթորինգի և վերլուծության բաժինների) | 167,585 | 172,396 | 177,209 | 181,361 | 186,613 | 191,864 | 196,454 |
| | 8) | 18 | Տեսուչ (պարեկային ծառայության կազմակերպման, մոնիթորինգի և վերլուծության բաժինների), կապիտան | 195,502 | 203,127 | 210,753 | 217,717 | 224,802 | 228,763 | 231,138 |
| | 9) | 13 | Տեսուչ (պարեկային ծառայության կազմակերպման, մոնիթորինգի և վերլուծության բաժինների), ավագ լեյտենանտ | 197,396 | 204,876 | 212,358 | 219,840 | 226,657 | 238,492 | 245,139 |
| | 10) | 11 | Տեսուչ (պարեկային ծառայության կազմակերպման, մոնիթորինգի և վերլուծության բաժինների), լեյտենանտ | 195,088 | 202,425 | 208,981 | 218,736 | 225,281 | 231,318 | 236,692 |
| | 11) | 36 | Գնդի հրամանատար | 145,887 | 150,082 | 154,535 | 158,989 | 163,255 | 187,957 | 192,918 |

| | | | | | | | | | |
|-----|-----|--|---------|---------|---------|---------|---------|---------|---------|
| 12) | 29 | Գնդի հրամանատարի տեղակալ, պարեկային գումարտակի հրամանատար | 185,769 | 191,031 | 196,696 | 202,412 | 208,483 | 236,554 | 243,716 |
| 13) | 27 | Գնդի գումարտակի հրամանատար, պարեկային գումարտակի հրամանատարի տեղակալ | 191,006 | 196,760 | 202,511 | 208,266 | 214,459 | 244,651 | 254,983 |
| 14) | 23 | Գնդի գումարտակի հրամանատարի տեղակալ, վաշտի հրամանատար | 171,556 | 176,386 | 181,655 | 186,925 | 192,194 | 204,825 | 211,425 |
| 15) | 22 | Վաշտի հրամանատարի տեղակալ, պարեկային դասակի հրամանատար | 163,942 | 168,688 | 173,434 | 178,611 | 183,790 | 188,967 | 194,573 |
| 16) | 21 | Ավագ պարեկ, մայր | 161,369 | 166,180 | 170,993 | 175,807 | 181,058 | 186,309 | 191,560 |
| 17) | 21 | Ավագ տեսուչ (ծառայության, տեխնիկայի գծով), մայր | 161,369 | 166,180 | 170,993 | 175,807 | 181,058 | 186,309 | 191,560 |
| 18) | 16 | Պարեկ, կապիտան | 193,916 | 201,541 | 209,167 | 216,792 | 224,539 | 228,500 | 231,537 |
| 19) | 12 | Պարեկ, ավագ լեյտենանտ | 189,195 | 196,676 | 204,158 | 211,639 | 219,118 | 230,953 | 237,600 |
| 20) | 10 | Պարեկ, լեյտենանտ | 181,226 | 188,563 | 195,780 | 205,536 | 212,081 | 218,118 | 224,154 |
| 21) | 16 | Տեսուչ (ծառայության), կապիտան | 193,916 | 201,541 | 209,167 | 216,792 | 224,539 | 228,500 | 231,537 |
| 22) | 12 | Տեսուչ (ծառայության), ավագ լեյտենանտ | 189,195 | 196,676 | 204,158 | 211,639 | 219,118 | 230,953 | 237,600 |
| 23) | 10 | Տեսուչ (ծառայության), լեյտենանտ | 181,226 | 188,563 | 195,780 | 205,536 | 212,081 | 218,118 | 224,154 |
| 24) | 9/3 | Կրտսեր պարեկ | 160,339 | 161,954 | 164,159 | 168,888 | 170,085 | 171,282 | 173,935 |

7) որոշման N 8 հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ «Թ.1»

բաժնով.

| | | | |
|----------|--|--|---------|
| « Թ.1 | 16.1. ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության՝ պարեկապահակետային ծառայության ոստիկանության գնդի, «Զվարթնոց» օդանավակայանի գծային բաժնի ծառայության վաշտի ծառայողներ, տարածքային բաժնի գծային բաժանմունքի ծառայության ավագ տեսուչ | | 13,492 |
| | 16.2. ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության պարեկապահակետային ծառայության ոստիկանության գնդի (բացառությամբ 4-րդ (հատուկ) գումարտակի) ծառայողներ | | 20,000 |
| | 16.3. ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության պարեկապահակետային ծառայության ոստիկանության գնդի 4-րդ (հատուկ) գումարտակի՝ | | |
| | 1) | Գնդի կազմում հատուկ գումարտակի հրամանատար | 214,910 |
| | 2) | Գնդի կազմում հատուկ գումարտակի հրամանատարի տեղակալ | 184,200 |
| | 3) | Վաշտի հրամանատար | 184,200 |
| | 4) | Ավագ ինժեներ | 156,200 |
| | 5) | Դասակի հրամանատար | 187,650 |
| 6) | Տեսուչ | 168,050 | |
| 7) | Ավագ ոստիկան | 118,440 | |

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: Սույն որոշման 1-ին կետի 1-ին, 3-րդ, 5-րդ և 7-րդ ենթակետերի գործողությունը տարածվում է 2021 թվականի մարտի 27-ից ծագած հարաբերությունների վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան